

այժմենին, ինչպէս կը տեսնենք Յունաց ու Հռովմայեցւոց քով ալ (Դար. Ա, 1266): Եւ բնականապէս կը ծառայէր հեղուկ կեւրակրոց ճաշակման:

Պատաստարաղ: Երկրորդն էր Արգամայ եւ Սմբատայ սպասուց (Խոր. 124), յիշուած մէկ բառով. եւ այնու որ «ոսկի» է, եւ դասուած սեղանի ուրիշ կարասեաց մէջ, բնաւ տարակոյս չկայ՝ թէ յատուկ էր ուտելու մսեղէն եւ այլ պինդ կերակրէրնէր: Սա Յունաց եւ Հռովմայեցւոց քով գրեթէ արդի ձեւն ունէր, եւ կը լինէր երկժանի կամ եռաժանի (Դար. Բ, 1424): — Նիւսացւոյն թարգմանութեանց մէջ կը գտնենք պատառաքաղին ուրիշ հոմանիշ մ'ալ, «զարծաթեղէն մսակայսն» (Ժող.Ը), յն. περόνγին դէմ, որ էր ծակող սրածայր ձողիկ մը (Շենկլ, Աղեքս.), ուստի մսին մէջ վարսելի: Հայերէն բարդ անունը կրնայ սեպհական լինել մեզ ալ՝ կապաղովկացւոց այդ սպասին հետ միասին:

Դանակ: Երրորդ կարեւորն էր սեղանի վրայ՝ որով Արշակ «միրզ» եւ «ամիճ» կը կտրէր (Փաւս. 208). եւ որ կը ծառայէր նաեւ «զհաց» եւ «զայլ եւս կերակուրս»

1. Առաջին անգամ հրատարակուած Տէր Ն. Բիւզանդացիէն ի Բագմվ. ԻԴ, 371: